Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

2715

# ԱՍԽԱԲԱԴԻ

## ՀԱՅ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ

## ԿԱՆԱՆՑ

## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԵԼՔԻ ԵՒ ՄՈՒՏՔԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇԻՒԸ

*1901 թ. Մարտի 3-ից մինչեւ 1902 թ. Մարտի 3-ը*

**ԱՍԽԱԲԱԴ**

Տպարան «Ասխաբադ» Լրագրի

1902

14257

# ԱՍԽԱԲԱԴԻ

## ՀԱՅ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ

## ԿԱՆԱՆՑ

## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

### ԵԼՔԻ ԵՒ ՄՈՒՏՔԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇԻՒԸ

*1901 թ. Մարտի 3-ից մինչեւ 1902 թ. Մարտի 3-ը*

**ԱՍԽԱԲԱԴ**
Տպարան «Ասխաբադ» Լրագրի
1902

# ՄՈՒՏՔ

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Ամբողջ տարուայ ընթացքում 77 տարեկան անդամուհիներից ստացուած է անդամավճար 5-ական ր. | 385 | — |
| 2. | Ընկերութեան պատուաւոր անդամուհի Նորին Գերազանձութիւն Օլիմպիա Իւանովնա Սուբոտիչից միանուակ նուէր . . . . . . . | 100 | — |
| 3. | Ընկերութեան պատ. անդամուհի Տիկ. Համասփիւռ Յակոբեանցից | 100 | — |
| 4. | Տիկ. Մինա Տէր-Մկրտչիանցից նուէր ընկերութեանս . . . . | 100 | — |
| 5. | Մի քանի դերասանների և քաղաքիս դադերասերների, ընկերութեանս օգտին տուած ներկայացումներից | 318 | 22 |
| 6. | Տարուայ ընթացքում զանազան բարեգործ անձինքներից նուէրներ | 494 | 94 |
| 7. | Ընկերութեանս տուած երեկոյթից և պատուաւոր տոմսերից ստացած նուէրները . . . . . . . . . | 228 | 23 |
| 8. | Ընկերութեանս մանկական պարտեզի 20 թոշակաորներից ստացուած կեսամեա թոշակադրամ (18-կան ր. իւրաք.) . . . . . . . | 360 | — |
| 9. | Ընկերութեան դրամագլխի տոկոս | 14 | 75 |
| 10. | Ընկերութեան տպակրած կանոնադրութեան վաճառումից . . . . | 9 | — |
| | Մուտքի գումարն է | 2110 | 14 |
| | Ընդամէննէ . . | 2110 | 14 |

# ԵԼՔ

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Ընկերութեան կանոնադրութեան խնդիրների, յայտարարութիւնների և այլ տպակրական ծախքի և դրոշմանիշների . . . . . . . . . . . | 121 | 99 |
| 2. | Չքաւոր ընտանիքների համար սննդի և հագուստի ծախք . . . . | 40 | — |
| 3. | Չքաւոր ընտանիքի համար բժիշկի և դեղօրայքի . . . . . . . . | 22 | — |
| 4. | Հայրենիք վերադարձող մի քանի անձանց ճանապարհածախք . . . | 31 | — |
| 5. | Երեք հատ կարի մեքենաների երեք չքաւոր ընտանիքի համար . . . | 70 | — |
| 6. | 35 չքաւոր երեխաների համար հագուստ և ոտաման . . . . . . | 84 | 80 |
| 7. | Ընկերութեան մանկական պարտեզի բացման առիթիւ . . . . . . . | 20 | 95 |
| 8. | Ընկերութեան կնիքների, մատեանի և պարտեզի ցուցանակի . . . | 10 | — |
| 9. | Պարտեզի համար վարժուհիներ հրաւիրելու առիթիւ հեռագրական ծախք . . . . . . . . . | 3 | 55 |
| 10. | Մանկական պարտեզի բնակարանի վարձ . . . . . . . . . . . | 51 | — |
| 11. | Պարտեզի երկու վարժուհիների ռոճիկ . . . . . . . . . . . | 135 | . |
| 12. | Պարտեզում ծառայող աղախինին ռոճիկ . . . . . . . . . . | 36 | — |
| 13. | Լուսաւորութեան, վառելիք և այլ մանր ծախք . . . . . . . . | 40 | 70 |

14. Նորին Բարձր Գերազանցութեան զինորական նախարար Գեներալ Ա. Ն. Կուրապատկինի անուան երկու թոշակաւորների և ընկերութեան հաշուին ուսանող աշակերտների ուսման վարձ գրուած է արական և իգական գիմնազեաներին և քաղաքական դպրոցին . . . . . . . . . 107 —

| | | |
|---|---|---|
| Ծախքի գումարն է | 773 | 99 |
| Արքուն. բանկ. պահեստի տրուած | 1324 | 51 |
| Առձեռն գումար . | 11 | 64 |
| Ըդամէնն է . . . | 2110 | 14 |



## ՀԱՇՈՒԷԿՇԻՌ ԵՒ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Ասխաբադի Հայ Լուսաւորչական բարեգործական ընկերութեան, 1901 թ. Մարտի 3-ից մինչև 1902 թ. Մարտի 3-ըն

Ընկերութիւնը սկսեց իւր գործունէութիւնն 1901 թ. Մարտի 1-ին հաստատուած է նախկին կառավարչապետ նորին գերազ. Գեներալ Լեյտ. Բոգալիւբովի թոյլատրութեամբ 12-ին Փետրուարի 1901 թ.

Սոյն անդրանիկ տարեշրջանում ընկերութիւնը ունեցել է 77 իսկական անդամուհի, Պատուաւոր Հոգաբարձու Նորին Օծութիւնն Վեհափառ Կաթողիկոս ամենայն Հայոց Մկրտիչ Առաջին։

Պատուաւոր անդամք. նորին գերազ. Օլիմպիայ Ի. Սուբոտիչ, նորին բարձր գերազ. գեներ. ադին. Ա. Ն. Կուրապատկին. նորին գեր. Գ. Լ. Բոգալիւբով Ն. Գ. Գ Նիւտոնով,

Ընկերութեան հիմնադիր, համեստափայլ Տ. Շուշանիկ Մամիկոնեանց և վարչութեան անդամուհի. Հ. Տ. Համասփիւռ Յակոբեանց։

Նախապէս վարչութիւնը յայտնում է, յարգելի հասարակութեան խորին շնորհակալութիւն, նաև օտար տեղերում գտնուած բարեգործ անձանց, որոնք նպաստել են ընկերութեան, տալով միջոց ծառաել իւր նպատակին:

Սոյն տարեշրջանում ընկերութիւնն ունեցել է 2 հերթական ընդհանուր ժողով, 1 արտակարգ

և 26 վարչնական ժողով, հարկաւոր հարցերի մասին խորհելու։

Վարչութիւնն աշխատել է կարողութեան չափ օգնել տեղոյս չքաւոր ընդանիքներին յետեւեալ կերպիւ՝

1. 1901 թ. 4 Նոյեմբերի ընկերութիւնը բացու մանկական պարտեզ տեղոյս երկսեռ մանուկների համար, բարեհաջ թոյլադրութեամբ երկրիս կառավարչապետ նոր. գերգ. Գ. Լ. Դ. Ի. Սուբոտիչի։ Սոյն առաջին կիսամեակում պարտեզը հաճախում է 40 մանուկ, որոնցից 20-ը ձրիավարժ են, որոնց ընկերութիւնն մատակարարում է հագուստ ուտման և անհրաժեշտ պիտոյքներ, որի համար ընկերութիւնն ծախսել է 48 ր. 80 կ.

2. Ընկերութիւնն ունի 4 թոշակաւոր տեղական դպրոցներում, որոնցից, իգական գիմնազիոնի աշակ. Մ Շախվերդեանց և արական գիմնազ. աշկ. Յ. Խառատեանց, նորին բարձր. գերազ. գ. ատ. Ա. Ն. Կուրապատկինի անուամբ են, ի յիշատակ Ն. Գ. Ախալքալաք այցելութեան ուսման վարձ վճարած է . . . . . . . . . . . . . . . . 107 ր.

3. Երեք չքաւոր այրիների, Անտոնեանց, Խանպապեանց և Աբրհամեանց, ապրուստի միջոց ձեռք բերելու համար, գնուածէ երեք կարի մեքենա 70 ր.

4. Ընկերութիւնն նպաստել է փողով և բժշկական օգնութիւն զանազան ժամանակ . 22 ր.

5 Հայրենիք վերադառնալու չքաւորներին ճանապարհածախս . . . . . . . . . . . 31 ր.

7. Չքաւոր ընտանիքների համար հագուստի ծախսուած է . . . . . . . . . . . . . . 40 ր.



## ԴՐԱՄՈՎ ՍՏԱՑՈՒԱԾ ՆՈՒԷՐՆԵՐ։

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Նորին գեր. ընկերութիւնն պատուաւոր անդամ. Օլիմպիայ Իվանովնա Սուբոտչից | 100 | — |
| 2. | Նոր. գ. գ. լեյ. Դ. Ի. Սուբոտիչից | 20 | — |
| 3. | Տ. Մինայ Տէր-Մկրտչիանից . . | 100 | — |
| 4. | Տ. Համասփիւռ Յակովբեանից . | 100 | — |
| 5. | Տ. Եղիսաբէթ Տէր-Օհանեանցից | 25 | — |
| 6, | Ամուսինք Տէր-Յուէփեանններից . | 60 | — |
| 7. | Տ. Ե. Ա. Ուսպենսկաից . . . . | 10 | — |
| 8. | Ն. Գ. Գ. Նիւտոնովից . . . . | 10 | — |
| 9. | Պ. Ժուրովից . . . . . . . . | 10 | — |
| 10. | Ն. Գ. Գ. Լ. Բագալիբովից . . . | 5 | — |
| 11. | Ընկերութեան բացման առթիւ նուէր . . . . . . . . . . | 120 | — |
| 12. | Մանկական պարտեզի բացման առիթով . . . . . . . . . | 108 | — |
| 13. | Տեղոյս սիրողների և դերասանների տուած ներկայացումներից, համերգներից ստացած է . . . | 489 | 45 |
| 14. | Տ. Սափարեանցի, Շ. Գասպարեանցի և Պ. Եարուելեանցի միջնորդութեամբ նուիրատուութ. զանազան անձերից և նուէր վարչութենից | 192 | 94 |

Բացի դրամով (փողով) նուիրներից ընկերութեան մանկական պարտեզի բացման առիթիւ, վարչութիւնն ստացել է բոլոր հարկաւոր իրեղէնները և զանազան կտորներ չքաւոր երեխաների հագուստի համար, նոյնպես ստացուած է անդամուհիներից տեսակ, տեսակ ձեռագործներ յօգուտ

ընկերութեան։ Ուստի վարչութիւնն պատիւ ունի կրկին անգամ յայտնել, իւր շնորհակալութիւնն բոլոր ընկերութեան նպաստող անձանց. թէ դրամով. թէ իրեղեններով և թէ գործով։

Նախագահ Տ. Մամիկոնեան.

Փոխ Նախագ. Մ. Սափարեանց.

Գանձապահ Ա. Աղբալեանց.

Խորհուրդի Անդամուհիք } Համաս. Յակոբեանց.
Զ. Յովսէփեանց.

Քարտուղար Եղ. Գասպարեանց